

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

(Սանկտ Պետերբուրգ, 2011 թվականի հոկտեմբերի 19)

ԵվրԱզԷՍ-ի շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների Կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

ղեկավարվելով «Մաքսային միությունում ներմուծման մաքսատուրքերի (դրանց համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ պարտադիր գանձումների) հաշվեգրման եւ բաշխման կարգը սահմանելու եւ կիրառելու մասին» 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրի 8-րդ հոդվածի 5-րդ կետով (այսուհետ՝ 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագիր),

ելնելով ներմուծման մաքսատուրքերի (դրանց համարժեք այլ տուրքերի, հարկերի եւ պարտադիր գանձումների) ժամանակին եւ լրիվ չափով Կողմերի բյուջեներ մուտք լինելու նկատմամբ հսկողությունը ապահովելու փոխադարձ հետաքրքրվածությունից,

ելնելով 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրի դրույթների կիրարկման եւ ներմուծման մաքսատուրքերի վճարման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգի կազմակերպման նպատակից,

համաձայնեցին հետեւյալի մասին.

Հոդված 1

Սույն Արձանագրության մեջ գործածվում են հետեւյալ տերմինները՝

«Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմիններ»՝ Բելառուսի Հանրապետության պետական մաքսային կոմիտեն, Ղազախստանի Հանրապետության ֆինանսների նախարարության մաքսային հսկողության կոմիտեն եւ Դաշնային մաքսային ծառայությունը (Ռուսաստանի Դաշնություն),

«Ներմուծման մաքսատուրքերի հաշվառումը վարելու կանոններ»՝ հաշվեգրման մեթոդով ներմուծման մաքսատուրքերի հաշվառումը վարելու միասնական սկզբունքների

մասին կանոններ, որոնք հաստատվել են Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի դեկտեմբերի 8-ի թիվ 493 որոշմամբ:

«Տեղեկատվության փոխանակման տեխնիկական պայմաններ»՝ փաստաթուղթ, որով սահմանվում է Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինների կողմից փոխանակվող տեղեկությունների կառուցվածքը եւ ձեւաչափը, դրանց փոխանակման մասին կանոնակարգը, փոխանակման ժամկետները եւ եղանակները, ինչպես նաեւ այն անձինք, որոնք պատասխանատու են տեղեկատվության նախապատրաստման, փոխանցման եւ ստացման համար:

Հոդված 2

Սույն Արձանագրության շրջանակներում Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները, պարբերաբար, Տեղեկատվության փոխանակման տեխնիկական պայմաններով սահմանված ժամկետներում, միմյանց, ինչպես նաեւ Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարություն են ներկայացնում այնպիսի տեղեկատվություն որը չի դասվում պետական գաղտնիք համարվող (պետական գաղտնիքներին վերաբերող) տեղեկությունների շարքին: Այդպիսի տեղեկատվությունը կարող է ձեւավորվել հետեւյալ առկա աղբյուրներից՝

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից ձեւակերպված՝ ապրանքների մասին հայտարարագրերի էլեկտրոնային պատճենների համաձայնեցված ապրանքային դիրքերով դասակարգված տվյալների բազան, որը նախատեսված է «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից վերլուծության եւ հսկողության գործառույթների իրականացման համար տեղեկատվության փոխանակումը կազմակերպելու մասին» համաձայնագրի 1-ին հավելվածով,

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից ձեւակերպված՝ մաքսային մուտքի օրդերների էլեկտրոնային պատճենների համաձայնեցված ապրանքային դիրքերով դասակարգված տվյալների բազան, որը նախատեսված է «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից վերլուծության եւ հսկողության գործառույթների իրականացման համար տեղեկատվության փոխանակումը կազմակերպելու մասին» համաձայնագրի 2-րդ հավելվածով,

անձնական հաշիվների, ռեեստրների եւ այլ փաստաթղթերի տվյալների բազաները, որոնք պարունակում են փաստացիորեն վճարված եւ բյուջե փոխանցված ներմուծման մաքսատուրքերի գումարների մասին տեղեկություններ, որոնք ձեւակերպվել են Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից ներմուծման մաքսատուրքերի հաշվառումը վարելու կանոններին համապատասխան:

Հոդված 3

Սույն Արձանագրության 2-րդ հոդվածով նախատեսված տեղեկատվության տրամադրումն իրականացվում է էլեկտրոնային եղանակով՝ Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինների մակարդակով:

Տեղեկատվության փոխանակումը իրականացվում է Տեղեկատվության փոխանակման տեխնիկական պայմաններին համապատասխան:

Տեղեկատվությունը տրամադրվում է ռուսերենով: Սույն Արձանագրության 2-րդ հոդվածով փոխանցված տեղեկատվության առանձին միավորների համար թույլատրվում է լատիներեն այբուբենի գործածումը:

Տեղեկատվության փոխանակումը իրականացվում է անհատույց հիմունքներով:

Հոդված 4

Սույն Արձանագրության 3-րդ հոդվածի դրույթները իրականացնելու համար կենտրոնական մաքսային մարմինները մշակում եւ հաստատում են Տեղեկատվության փոխանակման տեխնիկական պայմանները:

Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինների միջեւ էլեկտրոնային եղանակով տեղեկատվության փոխանակումը, ինչպես նաեւ այդ տեղեկատվության ներկայացումը Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարություն իրականացվում է դրանց տեխնիկական պատրաստվածությունն ապահովելուց հետո, ինչի մասին Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները գրավոր տեղեկացնում են միմյանց, ինչպես նաեւ Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարությանը:

Տեղեկատվության փոխանակման տեխնիկական պայմաններում փոփոխություններ կամ լրացումներ կարող են կատարվել մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինների ղեկավարների համաձայնեցված որոշմամբ:

Նախքան տեղեկատվության փոխանակման տեխնիկական պայմանների հաստատումը՝ Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները, աճողական կարգով՝ տարվա սկզբից, իրականացնում են տեղեկատվության ամենամսյա փոխանակում, ինչպես նաև այդ տեղեկատվությունը ներկայացնում են Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարություն: Օրացուցային ամիսը ընդունվում է որպես հաշվետու ժամանակաշրջան: Տեղեկատվությունը ուղարկվում է հաշվետու ամսվան հաջորդող ամսվա վերջին օրվանից ոչ ուշ՝ օգտագործելով սույն Արձանագրությանը կից ներկայացված ձևերը (Հավելված 1, 2): Առաջին տեղեկատվական հաղորդագրությունը ուղարկվում է սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու ամսվան նախորդող ամսվա վերջին օրվանից ոչ ուշ եւ պետք է ներառի, ամսական կտրվածքով, աճողական կարգով, 2010 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2010 թվականի դեկտեմբերի 31-ը եւ 2011 թվականի հունվարի 1-ից մինչև սույն Արձանագրությունն ուժի մեջ մտնելու ամիսը ներառյալ ընկած տեղեկատվությունը:

Հոդված 5

Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմիններն օգտագործում են այնպիսի տեղեկատվություն, որը ստացվել է սույն Արձանագրությանը համապատասխան՝ բացառապես սույն Արձանագրության նպատակներից ելնելով:

Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները, ինչպես նաև Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարությունը անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկում՝ սույն Արձանագրությանը եւ 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրին համապատասխան ստացված տեղեկատվությունը անօրինական տարածումից պաշտպանելու համար:

Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները ապահովում են այն անձանց շրջանակի սահմանափակումը, որոնց հասանելի է տեղեկատվական փոխանակման արդյունքում ստացված տեղեկատվությունը, ինչպես նաև այդ տեղեկատվության պաշտպանությունը՝ Կողմ հանդիսացող պետությունների օրենսդրությանը համապատասխան:

Մաքսային միության հանձնաժողովի քարտուղարությունն օգտագործում է սույն Արձանագրության համաձայն ստացված տեղեկատվությունը 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրի 8-րդ հոդվածի 1-ին եւ 2-րդ կետերը կիրարկելու նպատակներով:

Հոդված 6

Սույն Արձանագրության դրույթների կիրարկման հարցերի վերաբերյալ գրագրությունը կատարվում է ռուսերենով:

Մաքսային միության անդամ պետությունների կենտրոնական մաքսային մարմինները կարող են մշակել եւ իրականացնել համատեղ տեխնոլոգիական որոշումներ՝ ուղղված տեղեկատվության փոխանակմանը եւ պաշտպանությանը:

Հոդված 7

Կողմերի համաձայնությամբ՝ սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ եւ լրացումներ, որոնք ձեւակերպվում են առանձին արձանագրություններով:

Հոդված 8

Կողմերի միջեւ սույն Արձանագրության դրույթների մեկնաբանման եւ (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, խորհրդակցությունների եւ բանակցությունների միջոցով:

Եթե Կողմերը խորհրդակցությունների ու բանակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը դրանց անցկացման վերաբերյալ վեճի կողմերից մեկի կողմից վեճի մյուս կողմին ուղղված պաշտոնական գրավոր խնդրանքի ներկայացման ամսաթվից հետո 6 ամսվա ընթացքում, ապա, վեճի կարգավորման այլ միջոցի վերաբերյալ Կողմերի միջեւ պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի կողմերից յուրաքանչյուրը կարող է այդ վեճը փոխանցել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

Հոդված 9

Սույն Արձանագրությունն ուժի մեջ է մտնում «Մաքսային միության անդամ պետությունների մաքսային մարմինների կողմից վերլուծության եւ հսկողության գործառույթների իրականացման համար տեղեկատվության փոխանակումը կազմակերպելու մասին» համաձայնագիրն ուժի մեջ մտնելու ամսաթվից եւ գործում է 2010 թվականի մայիսի 20-ի համաձայնագրի գործողության ժամկետի ընթացքում:

Սույն Համաձայնագրի բնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը, որպես սույն Համաձայնագրի ավանդապահ, յուրաքանչյուր Կողմի կտրամադրի դրա հաստատված պատճենը:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2011 թվականի հոկտեմբերի 19-ին, մեկ բնօրինակից՝ ռուսերենով:

(ստորագրություններ)

Հավելված 1

«Ներմուծման մաքսատուրքերի վճարման վերաբերյալ տեղեկատվության փոխանակման կարգի մասին» արձանագրության

Օպերատիվ տեղեկություններ՝

կապված ներմուծման մաքսատուրքերի վճարման հետ,

_____ (ամիս, տարի) ժամանակահատվածի համար,

"__" _____ 20__ թվականի դրությամբ:

Չափման միավորը՝ հազար ԱՄՆ դոլար <1>

Ըստ բյուջեի դասակարգման ծածկագրի հաշվետու ամսվա սկզբին ներմուծման մաքսատուրքի փոխանցված մնացորդների գումարները	Ներմուծման մաքսատուրքի վճարման (գանձման) մասին ձեռակերպված փաստաթղթերում ներմուծման մաքսատուրքի փաստաթղթային եղանակով արտացոլված գումարը <2>	Ըստ բյուջեի դասակարգման ծածկագրի ներմուծման մաքսատուրքի ստացված (վճարված, գանձված) գումարը՝ (համաձայն լիազոր մարմնի միասնական հաշվի քաղվածքի (հաշվի մասին տեղեկատվության))		Վերադարձված ներմուծման մաքսատուրքի գումարները	Ըստ բյուջեի դասակարգման ծածկագրի հաշվետու ամսվա վերջում ներմուծման մաքսատուրքի փոխանցված մնացորդների գումարները (աղյ. 1 + աղյ. 3 - աղյ. 2 - աղյ. 5)	Ծանոթագրություն <4>
		ընդամենը	այդ թվում՝ ըստ ներմուծման մաքսատուրքերի բյուջեի դասակարգման ծածկագրերի հաշվեգրված՝ ներմուծման մաքսատուրքերի գումարը <3>			
1	2	3	4	5	6	7

Ծանոթագրություն:

<1> Կիրառվում է հաշվետու ամսվա համար ԱՄՆ դոլարի միջին ամսական փոխարժեքը Մաքսային միության անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի ազգային արժույթի նկատմամբ:

<2> Լրացվում է այն տեղեկությունների հիման վրա, որոնք ստացվել են աղյ. «B»-ից՝ (ապրանքների վերաբերյալ հայտարարագրեր Մաքսային տարանցման հայտարարագիր TД, Մաքսային արժեքի ճշգրտում KTC, Ապրանքների հայտարարագրի ճշգրտում KДT, Մաքսային մուտքի օրդեր (եթե ՄՄՕ-ն կիրառվում է ներմուծման մաքսատուրքերի վճարման համար) դուրս գրելով ներմուծման մաքսատուրքի գումարը (2011 թվականի փետրվարի 1-ից):

<3> Հաշվեգրված ներմուծման մաքսատուրքի գումարը-դրամական միջոցները (դրամական գումարները), որոնք մուտք են եղել լիազոր մարմնի միասնական հաշվին եւ հաշվեգրվել են ըստ ներմուծման մաքսատուրքերի բյուջեի դասակարգման ծածկագրի՝ ներմուծման մաքսատուրքերի վճարային հաշվին:

<4> Աղյուսակը լրացվում է ներմուծման մաքսատուրքերի գումարների վճարումը հետաձգելու եւ մաս-մաս վճարման նպատակներով, ինչպես նաեւ այլ տեղեկատվություն նշելու անհրաժեշտության դեպքում:

2-5-րդ աղյուսակներում նշված տեղեկությունները արտացոլվում են աճողական կարգով՝ տարվա սկզբից:

Հավելված 2

**«Ներմուծման մաքսատուրքերի վճարման
վերաբերյալ տեղեկատվության փոխանակման
կարգի մասին» արձանագրության**

Ներմուծման մաքսատուրքերի վերաբերյալ

ապրանքների հայտարարագրերի եւ մաքսային մուտքի օրդերների եւ այլ
փաստաթղթերի էլեկտրոնային պատճենների տվյալների բազաներից

վերցված օպերատիվ տվյալները

"__" _____ 20__ թվականի դրությամբ:

Չափման միավորը՝ հազար ԱՄՆ դոլար <*>:

Վճարման տեսակի ծածկագիրը	Ներմուծման մաքսատուրքի այն գումարը, որը հաշվեգրված է վճարման համար (_____ 20__ թվականի համար):	Ներմուծման մաքսատուրքի այն գումարը, որը հաշվեգրված է վճարման համար (աճողական կարգով՝ տարվա սկզբից)
1	2	3

Ծանոթագրություն

<*> Կիրառվում է հաշվետու ամսում ԱՄՆ դոլարի միջին ամսական փոխարժեքը
Մաքսային միության անդամ պետության ազգային (կենտրոնական) բանկի ազգային
արժույթի նկատմամբ: